

AGBU ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION  
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

CENRAL BOARD OF DIRECTORS  
ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յունուար 17, 1996

Պատուարժան Յոբելիական Յանձնախումբ  
Մեկգոնեան Կրթական Հաստատության  
«Օ»-ամեակի տոնակատարության  
Նիկոսիա, Կիպրոս

Հանդիպով ստացանք ձեր նամակը որով կը տեղեկացնէիք մեզի թէ կը պատրաստուիք յատուկ շուքով տօնելու Մեկգոնեան Կրթական Հաստատության հիմնադրության 70-ամեակը:

Մեկգոնեանը կրթական անդրանիկ հաստատությունն է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության. եւ որպէս այդպիսին ոչ միայն պատմական առաքելութիւն մը իրագործած է վերջին եօթ տասնամեակներուն, սփիւռքի պատմության մէջ, այլեւ լուսաւոր ուղի մը բացած է Միության միւս կրթարաններուն համար որոնք միասնաբար հանդիսուցած են Բարեգործականի բովանդակ գործունէության ամէնէն փայլուն իրագործումները:

Բազմաթիւ մտաւորական սերունդներ անցած են Մեկգոնեանի սեմէն եւ ոչ միայն ֆիզիքական սնունդ եւ պատուպարանք ստացած են այնտեղ այլ եւ ունեցած են հոգիի սնունդ ու միտքի լոյս:

Բազում սերունդներ, դաստիարակուելով Մեկգոնեանի ազգաշունչ մթնոլորտին մէջ, վերադարձած են իրենց համապատասխան գաղութները եւ ստանձնած են ղեկավարության ու դաստիարակության օրինակելի դերեր:

Կասկած չկայ թէ հաստատութիւնը ունեցած է դժուարութիւններ ու պիտի շարունակէ ունենալ ապագային սակայն անոր 70-ամեակը պէտք է հանդիսանայ այն սրբազան առիթը, որ համախմբէ բոլոր շրջանաւարտները -անձամբ թէ մտածումներով- իրականացնել շարունակելու համար Մեկգոնեան հարազատներու երազը՝ գալիք հայ սերունդներու համար:

Մեկգոնեանը ազգային վառ օճախ մըն է որուն նկատմամբ միշտ հոգածու վերաբերում մը ունեցած է Հ.Բ.Ը.Միության Կեդրոնը. սակայն, Մեկգոնեանը բոլորին է. մանաւանդ այնտեղ դաստիարակուած բոլոր սերունդներունը, որոնց հաւաքական կամքով ան պէտք է շարունակէ իր աւանդական առաքելութիւնը:

Ռեւէ կրթական օճախի խափանում՝ ազգային աղէտ մըն է մեզի համար. հետեւաբար, մեր ցանկութիւնն է որ միշտ բաց մնան դարպասները Մեկգոնեանին, որպէսզի ուսման ծարաւի սերունդներ երազներով մտնեն անկէ ներս եւ անոր շահէն վառելով իրենց հոգին՝ դառնան անոր ճշմարիտ առաքելները:

Ի սրտէ կը շնորհաւորենք Մեկգոնեանի 70-ամեակը եւ կը մաղթենք որ անոր շէն ու պայծառ յարկին տակ տակաւին բազում տարեդարձներ տօնուին՝ ի փառս մեր ազգին եւ Սուրբ մերոպի հանճարին:

Լաւագոյն զգացումներով՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Ցկեանս Պատուակալ Նախագահ